ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ

—1 *Սեպտեմբերի Սինոդն հրամայեաց՝ ունելով առաջի աչաց զի Յովհաննէս քահանայն Հնչէշտ աւանի ուղղակի դիմելով առ Նախարարութիւնն Ներքին Գործոց ըստ խնդրոյ տեղափոխութեան Առաջնորդական Աթոռոյն ի Ն. Նախիջեւան՝ մեղուցեալ է ընդդէմ պարտուց ծառայական կարգապահութեան, բայց և առնելով ի նկատ զմեղայական գիրս նորա յանուն Թեմական իշխանութեան և Սինոդիս՝ ուստի և յայս նուագ դատարեցուցանել զնա ի քահանայագործութենէ և արկանել ընդ եկեղեցական ապաշխարանօք յընթացս երկուց եօթնեկաց առ դրան եկեղեցւոյ տեղւոյն,* Հ. 681.

—Յ 12 *Սեպտ. Սինոդն հրամայեաց, յարգելով զխնդիր Մարիամու Բեկժանեան և զմիջնորդութիւն Կոնսիստորիային Հայոց Վրաստանի—տալ խնդրատուին ի վիճակային արդեանց, բաց ի սահմանեալ արդէն ի Սինոդէս կենսաթոշակէ, ևս ռուբլիս մի հարիւր ի տարին ի նպաստ՝ երկուց ամաց ժամանակաւ.* Հ. 692.

—22 *Սեպտ. Սինոդն հրամայեաց, ազատ կացուցանել զՏ. Յուսիկ վարդապետն ի կատարմանէ պաշտաման գանձապահի Մայր Աթոռոյ և ի տեղի նորա կարգել ցապաքինումն Տ. Համազասպայ վարդապետի՝ զՏ. Իսահակ վարդապետն Տէր Միքայէլեան.* Հ. 709.

—26 *Սեպտ. Սինոդն հրամայեաց կարգել զՏ. Իսահակ վարդապետ Տէր Միքայէլեան անդամ վանական կառավարութեան Մայր Աթոռոյ.* Հ. 719.

—Ի 29 *Սեպտ. Սինոդն հրամայեաց՝ յանձն առնել փաստաբանի Սինոդիս տալ վախճան գործոյ հաշտութեամբ ընդ Գէորգայ Գէորգեանց ըստ այնմ, զի զռենտայս տասն հազար ռուբլեաց փոխել ի դրամ կանխիկ ըստ ընթացիկ գնոյ այն է՝ ի գումար եօթն հազար եօթն*

հարիւր ռուբլեաց, պահանջել ի նմանէ, ընդ պահանջելի կանխիկ մի հազար երկերիւր քառասուն ռուբլիս ընդ ամենայն զուիթ հազար ինն հարիւր քառասուն ռուբլիս այնու, զի հատուցցէ ի գումարէդ զ 1500 ռուբ. ի կոելն զպայման հատուցման պարտուցն, իսկ զմնացեալ գումարն թողուլ առ Դէորգեացն չորս տոկոսեօք այնու, զի հատուցանիցէ զ1500 ռուբ. յիւրաքանչիւր ամի սկսեալ յառաջիկայ 1909 ամէ ցլրանալ ողջոյն գումարի պարտուցն։ Եապահովութիւն կանոնաւոր հատուցման պարտուցն ընդունել ի Դէորգեանցէ ի գրաւ ըստ պահանջից օրինաց զանշարժ կալուած մի։ Ի դէպս, եթէ Դէորգեանցն ոչ հաւան գտցի ընդ պայմանս այսոսիկ, յայնժամ ածել ի կատար զօրագրական վճիռ Սինոդիս ի 17 յունիսի տարւոյս, թ. 505. Հ. 726.

—Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ պատուիրել առնայն հոգևոր կառավարութեանց, փոխանորդաց, գործակալացն Բագուայ և Նոր–Բայազիտոյ և կառավարչաց կալուածոցն Մայր Աթոռոյ, որք ի Տփխիս, Յերևան և Ալէքսանդրապոլ քաղաքս, առաքել ի Սինոդն զամենայն հասանելի Մայր Աթոռոյ դրամս անմիջապէս յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, փոխադրելով զայնս ի ձեռն փոստայի և ոչ դրամատանց Երևանայ, տալով զայդմանէ տեղեկութիւն կոնսիստորիայից, ազդ առնելով նաև եթէ զանցառուք անկցին ընդ պատասխանատուութեամբ։ Հ. 727.

—Ց 3-ն հոկտ. Սինոդն հրամայեաց՝ ունելով ի նկատի. զերկրորդ բողոք պ. Կ. պ. Պրսկուրորի, որով հրաւիրէ զուշադրութիւն Սինոդին ի հանգամանս, զորս չէ առեալ ի քննին յառաջին որոշմունս իւր վասն ձեռնադրութեան Կարապետի Տէր Գրիգորեանց և Գոսպարայ Աղաղատեանց, և այժմ ըստ 794 յօդ. Կանոն. Քաղ. Դատ. վերստին ի քննին առեալ զինդիրս զայսոսիկ, մերժել զձեռնադրութիւն յիշատակեալ ընծայացուաց, այն է Կ. Տէր Գրիգորեանց, որոյ չէ ընկալեալ զվկայական ի պատշաճաւոր հաստատութենէ և Գ. Աղաղատեանց, որ չունի զպահան-

ջեալ վկայական ուսման և չէ ընտրեալ ի կանոնաւոր ծխական ժողովի։ Հ. 730.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ առեալ ի նկատ զնեղսակիր վիճակ եկեղեցական ծխակ. դպրոցին Ուլիանորաշէն գեղջ. զարդիւնս Ս. Մինաս ուխտատեղւոյ գեղջն թողուլ ընդ տրամատրութեամբ հոգաբարձուաց դպրոցին յընթացս այսր 1908 և առաջիկայ 1909 ամաց։ Հ. 734.

Ամուսնալուծութիւնք

— 8-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակացութեան կոնսիստորիային Հայոց Վրաստանի լուծանել զպսակ բնակչուհւոյ Տփխիս քաղաքի Հայկանուշի Վարդանեան ընդ առն նորա Մուշեղայ Սարգսեանց, կնոջն և եթ տալով իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 618.

— Ի 11-ն օգոստոսի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակացութեան կոնսիստորիային Երևանայ լուծանել զպսակ բնակչի Ագուլիս աւանի Քրիստափորի Տէր Աբրահամեան ընդ կնոջն Աշխէնի և ի նկատ առեալ զիննամեայ անջատ կենակցութիւն նոցա՝ տալ երկոցունց ևս իրաւունս մտանելոյ ի նոր ամուսնութիւն։ Հ. 628։

— 1-ն Սեպտ. Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակացութեան կոնսիստորիային Երևանայ լուծանել զպսակ բնակչին Եղուարդ գեղջ, գաւառին Էջմիածնի, Մատաթեայ Սահակեանց ընդ կնոջն Գիւլլիզարի, թոյլ տալով առն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 679.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց լուծանել զպսակ վերաբնակչի Բաքու քաղաքի Ստեփանի Անանեանց ընդ կնոջն Եղիսաբէթի, թոյլ տալով երկոցունց ևս մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլս։ Հ. 980.

— 24-ն Սեպտ. Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն կոնսիստ. Երևանայ լուծանել զպսակ բնակչուհւոյ Երևան քաղաքի Իսկուհւոյ Մահտեսի Պողոսեան ընդ առն Յակոբայ Առբեանց և թոյլ տալ կնոջն և եթ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում։ Հ. 713.

— 26-ն Սեպտ. Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակացութեան կոնսիստոր. Երևանայ լուծանել զպսակ ընակչի Տփխիս քաղաքի Բագարատայ Գրիվէշեանց ընդ նատալիայ Ստեփանեան, թոյլ տալով միայն առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 715.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակացութեան կոնսիստորը. Երևանայ լուծանել զպսակ Մամիկոնի Իւանեանց ընդ կնոջն Հռիփսիմեայ Առուաքատրեան, թոյլ տալով միայն առն Մամիկոնի մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 717.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակացութեան կոնսիստորը. Հայոց Վրաստանի լուծանել զպսակ Անանի Մելիք-Նահնազարեանց ընդ կնոջն Հեղինեայ և երկոցունց ևս թոյլ տալ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլս զկնի երկամսեայ եկեղեցական ապաշխարութեան: Հ. 721.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ համեմատ եղբակացութեան կոնսիստորը. Հայոց Վրաստանի, լուծանել զպսակ Խաչատրոյ Սարգսեանց ընդ կնոջն Ջաւահրի, թոյլ տալով միայն առն մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 722.

— 3-ն Հոկտեմբերի Սինոդն հրամայեաց՝ հաստատելով զեղբակացութիւն կոնսիստորական Երևանայ, լուծանել զպսակ ընակչուհւոյ Երևան քաղաքի Վարսենիկան Աղասալեանց ընդ առն Աղէքսանդրի Յակոբեանց և կնոջն և երթ թոյլ տալ մտանել ի նոր ամուսնութիւն ընդ այլում: Հ. 732.

— Ի նմին թուի Սինոդն հրամայեաց՝ ոչ գտանելով հիմն բաւարար առ ի լուծանել զպսակ ընակչի Տփխիս քաղաքի Գեբասեժի Բարսեղեանց ընդ կնոջն Սոփիայ, զկնդիրս նոցա թողուլ առանց հետևանաց: Հ. 733.

———※※———